ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, (098) 937162, (096) 389225, nshavan18@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 19

ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ.-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Նշավան համայնքում սահմանել 2016թ-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ոչ հիմական շինարարության տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել.
Հիմնական օբյեկտների համար
ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար սահմանել 15000 դրամ:
բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30000 դրամ
բբ) 501քմ-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ
բգ) 1001քմ-ի մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 60000 դրամ
բդ) 3001քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 100000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դրամ
դ) 20քմ և ավելի մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն

ընդլայնող այլ կառույցներ(այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ
դ) բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքու շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ Սույն հոդվածի 1-ին,2-րդ և 3-րդ կետերի համար կիրառել 0.5 գործակիցը՝սահմանված դրույքաչափի համար:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է
ա) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝2500 դրամ:
բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝2500 դրամ:

5.Համայնքի տարածքում
ա) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 1քմ համար 350 դրամ:
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և(կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:
գ) խանութներում կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 3000 դրամ:

6.Համայնքի տարաշքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համա՝ 1000 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական

այմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարական շահագործումը հաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝500 դրամ:

2.Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու ետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 500 դրամ:

3.Մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝500 դրամ:

4.Աղբահանության վճար՝յուրաքանչյուր անձի համար ամեն ամիս 20 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՌՆԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ**